ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց անկախ պետականության կայացման ամենազորեղ կռվաններից մեկն ազգային բանակի ստեղծումն է: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական ու ծանր փուլում՝ 1917 թ. դեկտեմբերին, ստեղծվեց Հայկական կորպուսը:

1918 թ. մարտի վերջին հայկական կորպուսի մարտական անձնակազմի թվաքանակը կազմում էր շուրջ 20000, որից մոտ 800-ը՝ սպա: 1918 թ. ամռանը Հայկական կորպուսը վերակազմավորվեց մեկ հետևակային դիվիզիայի, որի հրամանատար նշանակվեց գեներալ Մովսես Սիլիկյանը (1862–1937): Դիվիզիայի թվակազմը հասնում էր մոտ 16 հազարի[1]: 1919 թ. հունվարի դրությամբ այդ քանակը գրեթե անփոփոխ էր, իսկ նույն թվականի վերջին հայկական բանակի թվաքանակը կազմում էր ավելի քան 30000[2]:

1918 թ. դեկտեմբերի 11-ին սկսված հայ-վրացական պատերազմում մինչև դեկտեմբերի վերջը վրացական բանակը պարտություններ էր կրում ու նահանջում: Դեկտեմբերի 26-ի դրությամբ հայկական բանակը որպես ռազմավար վերցրել էր 400 վագոն, 25 շոգեքարշ, 39 գնդացիր և 3 զրահագնացք[3]: Արդեն 1920 թ. հունվարին հանրապետության բանակի թվաքա-

---

[1] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1267, ց. 1, գ. 30, թ. 7, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 1-2:

[2] Տե՛ս Կարապետյան Մ. Լ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918–1920 թթ.), Երևան, 1996, էջ 45:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 91:

նակը հասնում էր 25000-ի, իսկ աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի շրջանում, շուրջ 40 հազարի[4]:

Բանակը սկզբից ևեթ հիմնականում զինված է եղել ռուսական բանակի սպառազինությամբ: Շարքային զինվորի հիմնական զենքը հանդիսացել է ռուսական երեքգծանի՝ 7,62 մմ "Мосин-Наган" հրացանը (7,62x54 R մմ փամփուշտներ), սահմանափակ քանակությամբ կային նաև գերմանական, ֆրանսիական և այլ տեսակի հրացաններ: Որոշ տվյալներով՝ ռուսական բանակի հեռանալուց հետո Հայաստանի Հանրապետությանը մնացել էր 100000 երեքգծանի հրացան, մեկ միլիարդ փամփուշտ, 3000 թնդանոթ, 3000 գնդացիր և այլն[5]: Կարծում ենք, որ այս թվերը չափազանցված են: Ռազմաճակատի կազմալուծումից հետո հեռացող զինվորները երբեմն զենքերը ոչ միայն չէին թողնում, այլ նաև տանում էին մեծ քանակությամբ: Ռուս-թուրքական ռազմաճակատն անգամ լավագույն ժամանակներում չուներ 3000 հրանոթ կամ գնդացիր[6]: Այս ռազմաճակատը համարվում էր երկրորդական և բոլոր մատակարարումներն անկանոն էին: Կովկասյան բանակի զոր-քերն ամենալավ ժամանակներում անգամ չեն ունեցել նույնիսկ 1000 հրանոթ[7]:

Նույնը վերաբերվում է նաև հրացանների և փամփուշտների թվերին: 1920 թ. հուլիսի 5-ին Բաթում հասած նավն Անգլիայից բերել էր 25000 միավոր "Ross Mark II" կամ "Ross Mark III" կանադական հրացան, 400 միավոր "Vickers" գնդացիր և

---

[4] Տե՛ս Ռուբեն, Հայ-հեղափոխականի մը հիշատակները, հ. 7, Երևան, 1991, էջ 337–338:

[5] Տե՛ս Սիմոնյան Հ. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 295–296:

[6] Տե՛ս Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте, Москва, 1946, էջ 8–25:

[7] Տե՛ս Военный энциклопедический словарь, Москва, 2002, էջ 1404, 1178, 1399, Корсун Н. Г., նշվ. աշխ., էջ 8–25:

մոտ 58000000 փամփուշտ՝ այս զենքերով կիրառման համար, ինչպես նաև մեծ քանակությամբ պարեն, հագուստ և այլն:

Հաճախ զենքերի անունները և այլ տեխնիկական մանրամասներ սխալ են նշվում: Կանադական վերը նշված հրացանները հայկական գրականության մեջ երբեմն սխալմամբ անվանում են «Բոշ»: Ձեռքի գնդացիրները ամերիկյան "Lewis" մոդելի էին[8]:

Կանադական հրացանների մարտական հատկությունների մասին հայկական աղբյուրներում հիմնականում բացասական են նշում: Մեր զինվորականներն ու ղեկավարները դրանք համարում են ծանր, անհարմար և անպիտան[9]: Զենքը, ճիշտ է, օգտագործում էր 7.7x56R մմ (303 British) հիանալի փամփուշտները, որոնք կիրառվում էին նաև այլ զենքերի վրա, սակայն զենքն իրականում խնդիրներ ուներ: Կանադական զորքերն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հաճույքով հրաժարվում էին դրանցից և անցնում նույն փամփուշտը կիրառող անգլիական "Lee-Enfield" հրացանին[10]: Ամենայն հավանականությամբ, այս զենքը և զինամթերքը բերվել էր ոչ թե գործարաններից, այլ նախկին ռազմաճակատներից, ուստի կարող էր անմխիթար վիճակում լինել: Այնպես որ, այս հրացանների Հայաստան ուղարկումն անգլիական հրամանատարության կողմից զենքերից ձերբազատվելու քայլ էր:

---

[8] Ford Roger (2005). The World's Great Machine Guns from 1860 to the Present Day. London (UK), p. 68–71.

[9] Վրացյան Ս., Հայաստանի հանրապետություն, Երևան, 1993, էջ 508, Սասունի Կ., Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք» ամս., Բոստոն, 1926, թիվ 5, էջ 80:

[10] Rawlings Bill, Trench Warfare, Technology and the Canadian Corps 1914–1918, University of Toronto Press, 1992, p. 12, Dancocks Daniel G., Gallant Canadians: The Story of the Tenth Canadian Infantry Battalion, 1914-1919 (Calgary Highlanders Regimental Funds Foundation, 1990).

Հունաստանը Հայաստանին փոխանցեց 10000 միավոր "Gras" ֆրանսիական հրացան և 4000000 փամփուշտ[11]: Դրանք արդեն հնացած զենքեր էին համարվում: Ռուսական սպիտակգվարդիական շարժման առաջնորդներ գեներալներ Ա. Դենիկինը և Պ. Վրանգելը տրամադրել էին երեքգծանի հրացանի 3 մլն փամփուշտ և հրետանային արկեր: Փոխադրման դիմաց տրամադրված զենքերի որոշ քանակություն Հայաստանը ստիպված էր թողնել Վրաստանին: Ինչպես երևում է, այդ հարկը երբեմն կազմում էր ավելի քան 27%[12]: 1919 թ. Հայաստանի կառավարությունը դիմել էր ֆրանսիական կողմին՝ 10000 միավոր "Lebel" հրացանների գնման համար, որը նրանք շատ թանկ էին վաճառում[13]: 1920 թ. ամռանը ֆրանսիացիներն ամեն կերպ ցանկանում էին Հայաստանին վաճառել "Lebel" հրացանների մեծ, հավանաբար այլ խմբաքանակ[14]: Տարբեր տեղեկությունների համաձայն՝ կառավարությունը ցանկանում էր հավաքել ֆրանսիական այս հրացանները: Ներքին գործերի նախարարը դիմել էր բնակչությանը՝ որոշակի գումարի դիմաց այդ հրացանները հանձնելու խնդրանքով:

Հայկական բանակը գրեթե միշտ գնդացիրների պակաս է ունեցել, սակայն խնդիրը ոչ միայն դրանց քանակի մեջ էր, այլ նաև փամփուշտների: Հայկական բանակում կիրառվում էին ռուսական "Maxim"-ներ, սահմանափակ քանակությամբ անգլիական "Vickers", ամերիկյան "Lewis" և "Colt Browning M1895" գնդացիրներ: Փաստորեն՝ բանակը կիրառում էր մի քանի տեսակի գնդացիրներ և դրանց համար տարատեսակ փամփուշտների հայթայթումը մեծ խնդիր էր: Դեռևս հայկական

---

[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, մաս 2, թ. 378:
[12] Տե՛ս նույն տեղում, գ. 488, թ. 76:
[13] Տե՛ս նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 237, թ. 5:
[14] Տե՛ս Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 133:

առանձին գումարտակների ժամանակ մոտավորապես 800–1000 զինվորին, որը կազմում էր մոտավորապես մեկ գումարտակ, բաժին էր ընկնում մինչև 4 գնդացիր (այն էլ փամփուշտների համեմատաբար լավ մատակարարումների պայմաններում)[15]: 1918 թ. մարտի 31-ի տվյալներով՝ հայկական բանակային կորպուսի սպառազինության մեջ կար 170 գնդացիր և ընդամենը 36 հրանոթ (20000/170=117)[16]: Նույնիսկ 1919 թ. մարտի դրությամբ Դրոյի ենթակայության տակ եղած ավելի քան 1400 հոգանոց զորախումբն ուներ ընդամենը 2 գնդացիր[17]:

Հայկական բանակի սպայական և զինվորական կազմի որոշ մասը զինված էր նաև ռուսական բանակի "Nagant" թքմբկավոր ատրճանակներով (7,62x38 մմ փամփուշտով): Սակայն բոլորի կողմից առանձնահատուկ սեր էր վայելում մեծ տարածում գտած "Mauser K-96" ուղիղ փամփշտատուփով ատրճանակը (7,63x25 մմ փամփուշտով): Նման զենքերով զինված ջոկատները հաջողությամբ էին գործում դիվերսիոն գործողությունների ժամանակ: Ինչպես տեսնում ենք, հայկական բանակը հիմնական հրաձգային զենքերի առումով զինված էր բազմազան տեսակներով, ինչը լրացուցիչ խնդիրներ էր ստեղծում:

Հայկական կորպուսի հրետանին կազմավորված էր 2 հրետանային բրիգադից, 4 առանձին դիվիզիոններից և առանձին լեռնային մարտկոցից՝ ընդհանուր առմամբ մոտ 100 հրանոթ, որոնցից սոսկ կեսն էր պահպանվել համաշխարհային պատերազմից հետո: Վրաստանի դեմ պատերազմում հայկական բանակը բռնագրավեց 17 հրանոթ, որից 2-ը՝ հաուբից, գնդացիրներ, հրացաններ, ձիեր և այլ գույք: Սա հնարավորություն

---

[15] Տե՛ս Կարապետյան Մ. Լ., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները կովկասյան ռազմաճակատում, Երևան, 1999, էջ 95:
[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 88, թ. 1:
[17] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 146:

տվեց ձևավորել 2 մարտկոց՝ թեթև և լեռնային: Բացի այդ՝ բանակը համալրվեց նաև երկու զրահագնացքով:

Կարսում ևս թուրքական զորքերը թողել էին որոշ քանակությամբ կիսաթալանված, կամ կիսաոչնչացված հրետանային գույք՝ հրանոթներ, զինամթերք, վառոդ և այլն: 1919 թ. վերջին բանակի հրետանին ուներ 130–140 հրանոթ, որոնցից 63-ը (15 մարտկոց) տրված էր հրետանային բրիգադին: Կարսի բերդի հրետանին ուներ 64 հրանոթ և 2 զրահագնացք՝ 4 հրանոթով: Հատուկ նշենք, որ 1914–1916 թթ. Կարսի ամրոցում եղել է մոտ 90 հրանոթ, հաուբից և հրասանդ, 5 հրետանային գումարտակ (դիվիզիոն)[18]: Այս թվից 29 հաուբիցը և 16 հրասանդն օգտագործվել է 1915 թ. նոյեմբերին և 1916 թ. փետրվարին Էրզրումի գրավման ժամանակ: Դրանից հետո հրանոթները մնացել են Էրզրումում և չեն վերադարձվել[19]: Կարսում եղած հրանոթներից ավելի քան 60-ը, ինչպես նաև մեծ քանակությամբ մարտապաշար և այլ գույք, անգլիացիներն իրենց հետ տարան, ինչի կապակցությամբ բողոքներ եղան, սակայն ապարդյունք[20]: 1919 թ. հուլիսի 16-ին Հայաստանում Ադրբեջանի ռազմական ներկայացուցիչը գաղտնի հեռագրով իր ղեկավարությանը հաղորդում էր, որ հայկական բանակում կա 12 հրետանային մարտկոց՝ 4-ական հրանոթներով[21]:

1919 թ. հետո հրետանու քանակը շատ չէր աճել: Հրետանու սպառազինությունը հիմնականում կազմում էին երեք դյույմանոց՝ 76,2 մմ թեթև (1900 թ. նմուշի), լեռնային հրանոթները (1909 թ. նմուշի, ֆրանսիական "Danglise-Schneider" ընկերութ-

---

[18] Տե՛ս Корсун Н., Эрзерумская операция на Кавказском фронте Мировой войны в 1915–1916 гг., Москва, 1938, էջ 5–40:

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 53:

[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 109, թ. 251:

[21] Տե՛ս Հարությունյան Կ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., Երևան, 2012, էջ 26:

յան հրանոթը), ինչպես նաև հինգ դյույմանոց՝ 122 մմ հաուբիցները: Կան նաև չապացուցված տեղեկություններ այն մասին, որ հայկական բանակում եղել են նաև ութ դյույմանոց՝ 203,2 մմ-ոց հրանոթներ: Մենք կարծում ենք, որ սրանք կարող էին լինել միայն Կարսի ամրոցում, այն էլ սահմանափակ քանակով և հավանաբար անպիտան վիճակում: 1920 թ. Մեծ Բրիտանիայից Հայաստանին է փոխանցվել 44 հրանոթ[22]:

Ներկայացվածը լավագույնս ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության բանակը չէր կարող ունենալ որակյալ հրետանային միջոցներ.

1. Կովկասյան բանակում հրետանու գործը ավելի վատ էր, քան եվրոպական ճակատում:

2. Ամրոցների հրետանին առհասարակ, ինչպես նշվեց, վատ վիճակում էր:

3. Հայկական բանակում գրեթե իսպառ բացակայում էր ծանր հրետանին:

4. Դաշնակիցներից չի ստացվել հրետանու համար շոշափելի օգնություն:

Ռուսական հրամանատարության կողմից հայկական կորպուսի տնօրինությանն էր հանձնված 2-րդ, այլ տվյալներով՝ 3-րդ Կովկասյան ավիաջոկատը, որը և դարձավ հայկական բանակի օդուժի հիմքը: Հայկական բանակի ավիաջոկատի հիմնադրման ամսաթիվ է համարվում 1918 թ. օգոստոսի 15-ը[23]: Ավիաջոկատի առաջին հրամանատարն էր պորուչիկ Վոիպովը, որին 1919 թ. սկզբներին փոխարինեց Արթուր Վասիլի Ղուլյան-Ռիլսկին (երբեմն նշվում է նաև Գուլյան): Սկզբնապես հայկական միակ ավիաջոկատն ուներ երեք ինքնաթիռ, երեքն էլ

---

[22] Տե՛ս Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 188:

[23] Տե՛ս Հարությունյան Կ. Ա., նշվ. աշխ., էջ 35:

տարբեր մակնիշների՝ "Nieuport", "Morane-Saulnier L" և "Voisin III" կամ "Voisin V":

Ինքնաթիռների պահեստամասեր չկային և թռիչքներ գրեթե չէին կատարվում: Քամին պոկել էր անգարի կտուրը, որի հետևանքով ջախջախվեցին ինքնաթիռներից երկուսը: "Voisin III"-ը մասնակցեց հայ-վրացական պատերազմին, սակայն շարքից դուրս եկավ Ալեքսանդրապոլում վառոդի պահեստի պայթյունի ժամանակ: Այսպիսով, ավիաջոկատը, դադարեց գոյություն ունենալ: Սա նշանակում է, որ ավիաջոկատի փոխանցումից հետո հայ ավիատորները վերանորոգել էին այդ ինքնաթիռները և փորձել կիրառել: 1919 թ. փետրվարի 28-ով թվագրվող մի կարևոր զեկուցագրում, որը ռազմական նախարարն ուղարկել է նախարարների խորհրդին, մասնավորապես նշված է, որ տվյալ դրությամբ օդուժում կա ընդամենը մեկ գործող օդանավ և մի քանի ամսից երկու կոտրվածից կարելի է հավաքել մեկը: Բոլոր սարքերը հնացած են և մաշված: Ջոկատի կազմն էր՝ 5 օդաչու, 1 դիտորդ-օդաչու, 1 մեխանիկ-հրահանգիչ, 3 շարժիչագործ, 6 շարժիչագործի օգնական, 2 վարորդ, 2 վարորդի օգնական, 10 վարպետ: Ելնելով այս ամենից՝ նախարարն առաջարկում էր կազմալուծել ջոկատը, իսկ որոշ ծառայողների մեկ-երկու տարով գործուղել Ֆրանսիա՝ ուսումնառության և նոր սարքերի ձեռքբերման նպատակով: Նախարարը զեկուցում է նաև, որ ֆրանսիացի կապիտան Ա. Պուադեբարը կարծում է, որ ավիաջոկատը հարկավոր է սահմանի պահպանման համար: Վերջում նախարարը խնդրում է թույլ տալ, այնուամենայնիվ, ուսման նպատակով գործուղել 5–6 սպա և 15–18 զինվոր, իսկ Ֆրանսիայից գնել ինքնաթիռներ և սարքավորումներ[24]:

---

[24] Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 35, թ. 53:

Կարսի ազատագրումից հետո՝ 1919 թ. մարտից, փաստորեն, սկսվեց նոր ավիաջոկատի կազմավորումը: Կարգի բերվեցին թռիչքադաշտը, անգարներն ու պահեստամասերը, ստեղծվեցին ինքնաթիռների նորոգման ու հավաքման արհեստանոցներ: Սկսվեց նոր ինքնաթիռների սարքավորումը: 1919 թ. վերջին հավաքվեցին երեք "Morane-Saulnier L", երեք "Voisin" և մեկ "Nieuport", որոնց վերջնական շահագործման համար, սակայն դեռևս, անհրաժեշտ էր ձեռք բերել թևերի համապատասխան երեսպատման նյութեր և հայկական ավիաջոկատը կունենար 7–8 թռչող սարք: Ավելի ուշ Ֆրանսիայից ձեռքբերվեց երկու "Salmson 2 A2" ինքնաթիռ, որոնք տվյալ ժամանակի համար թռիչքային մեծ արագություն ունեին (200 կմ/ժ) և նախատեսված էին հետախուզական թռիչքների, ըստ հարկի՝ նաև ռմբակոծում իրականացնելու համար:

1920 թ. տարբեր երկրներից Հայաստան էին ժամանում նաև ավիացիայի ոլորտի մասնագետներ: Հայաստանը Մեծ Բրիտանիայից գնել էր որոշ քանակությամբ ինքնաթիռներ, որոնք, սակայն, 1920 թ. սկզբից կանգնած էին Բաթումում և Հայաստան չէին փոխադրվում[25]: Վերը նշված երկու ֆրանսիական ինքնաթիռները Բաթումից գնացքով Հայաստան են ուղարկվել 1920 թ. հունիսի 16-ին: Դրանք ուղեկցում էր Ղուլյան-Ռիլսկին[26]:

Ընդհանուր առմամբ, հայկական ռազմական ինքնաթիռների քանակը հասել է մինչև 12-ի, դրանք 1920 թ. թուրք-հայկական պատերազմում կատարել են շուրջ 30 ռմբանետում[27]: Կարսի անկման օրերին ավիաջոկատում դեռ կար երկու ինքնաթիռ, որից գործում էր միայն մեկը: Այդ մասին բավականին

---

[25] Տե՛ս Գալոյան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 186:
[26] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 442, մաս 1, թ. 180:
[27] Տե՛ս Հարությունյան Կ. Ա., նշվ. աշխ., էջ 35:

ցայտուն մանրամասնում է Կարսի օդանավային ջոկատի զինվոր, հետագայում խորհրդային հայտնի ավիակոնստրուկտոր Արամ Ռաֆայելյանցը[28]: Նա նշում է, որ 1920 թ. հոկտեմբերի 30-ին, ժամը 12-ի շրջանում, Կարսի անկման անխուսափելիության պայմաններում, նրանք ավիաջոկատից օդ բարձրացրեցին միակ սարքին ինքնաթիռը: Օդաչուներն էին վերը նշված կապիտան Ղուլյանը և պորուչիկ Նիկոլայ Խորոզովը: Այդ սարքն օդ բարձրանալով նախ փորձեց իր գնդացրային կրակով օգնել հայկական զորքերին, իսկ հետո ուղևորվեց դեպի Երևան: Մյուս սարքը նրանք փորձել են տանել երկաթգծի կայարան և տեղափոխել Ալեքսանդրապոլ, սակայն չի ստացվել[29]: Նշվածից կարելի է կատարել որոշակի եզրակացություններ: Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիայից բերված ինքնաթիռների հետ միասին ջոկատը պիտի ունենար արդեն մոտ 9–10 ինքնաթիռ՝ իսկ Ա. Ռաֆայելյանցը հայտնում է, որ հոկտեմբերի 30-ին Կարսում եղել է երկու ինքնաթիռ՝ մեկը սարքին, մյուսը՝ անսարք: Եթե հաշվի առնենք, որ մեր ունեցած տեղեկության համաձայն մինչև հոկտեմբերի 20-ն ինքնաթիռներն ակտիվորեն վերանորոգվում էին, նշանակում է նաև ակտիվորեն կիրառվել են: Սովորաբար այս ժամանակի համար առաջին մարտական խնդիրը համարվում էր հետախուզությունը, որի համար էլ, հավանաբար, ակտիվորեն կիրառվել են սարքերը: Պատերազմական իրադրությունում երբեմն ինքնաթիռներն օգտագործվում էին նաև կապի ապահովման նպատակով:

---

[28] Հրասայլի թռիչքն ապահովող առաջին խորհրդային ճախրաթիռներից մեկի, խորհրդային առաջին ուղղահայաց-թռիչք և վայրէջք կատարող սարքի և բազում այլ նախագծերի հեղինակ (Տես Арутюнян К. А., Погосян Г. Р., Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне, Ереван, 2010, էջ 727–728):

[29] Տես Զոհրաբյան Է. Ա., նշվ. աշխ., էջ 257–258:

1918 թ. օգոստոսին ձևավորվեց բանակի ռադիոհեռագրական բաժանմունքը: Երկու ռադիոկայանից մեկը տեղակայված էր Քանաքեռի հրետանային պահեստում, մյուսը՝ Բաշ-Ապարանում: 1919 թ. սեպտեմբերին ռադիոբաժանմունքը վերափոխվեց ռադիոդիվիզիոնի՝ ավտոմոբիլային, դաշտային և 2 փոքր ռադիոկայաններով: Բացի այդ, դաշտային ռադիոկայանի առանձին մասերից սարքավորվեց ժամանակավոր բազիսային ռադիոկայան: Երևանի տեխնիկական ընկերությունը սարքավորեց և ռազմական գերատեսչությանը հանձնեց հզոր ռադիոկայան: Ռադիոհեռագրական ծառայության համար մասնագետներ պատրաստելու նպատակով, դիվիզիոնին առընթեր բացվեց հատուկ դպրոց:

Սևանա լճի նավատորմիկը կազմավորվեց 1919 թ. մայիսին: Կազմավորողն ու հրամանատարն էր ռուսական ծովակալության սպա Սերգեյ Թումանյանը: Նավատորմիկի բազան սարքավորվեց Ելենովկա գյուղում (այժմյան Սևան քաղաքում): Հիմնվեց նավահանգստային դարբնոց, փականագործական և ատաղձագործական արհեստանոցներ: Կառուցվեց «Աշոտ Երկաթ» ռազմաբեռնատար երկկայմ առագաստանավը, որի տարողությունը 1000 փութ էր: Այն զինված էր մեկ թնդանոթով, երկու գնդացիրով և ուներ լուսարձակ: Նավատորմիկը կոչված էր զորք և ռազմական բնույթի բեռներ փոխադրելու համար: Բացի ռազմանավից, նավատորմիկն ուներ նաև մի քանի շարժիչային թիանավ, իսկ 1920 թ. սեպտեմբերին Շահթախթից Սևանա լիճ փոխադրվեց ռուսական նավատորմի «Սեստրիցա Նյուշա» նավը, որը Հայաստան էր բերվել դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին՝ Վանա լիճ փոխադրելու համար: Այն վերանվանվեց «Գեղանուշ»[30]:

---

[30] Հարությունյան Կ. Ա., նշվ. աշխ., էջ 35–36:

Հայաստանի անկախության հռչակման շրջանում ռազմական մատակարարման աղբյուրներն իսպառ բացակայում էին: Հարկ եղավ այդ նպատակով նոր միջոցներ գտնել, քանի որ նախկին ռուսական բանակի բոլոր պահեստներն ընկել էին թուրքերի ձեռքը, իսկ Թիֆլիսում եղածը փոխանցվել էր վրացիներին: Հաղորդակցությունն իրականացվում էր թուրքերի թույլատվությամբ, շաբաթը 1–2 անգամ՝ Ալեքսանդրապոլով, ընդ որում՝ կառավարության տնօրինության տակ կային 3–4 շոգեքարշ և 2 ապրանքատար գնացք: Բացի այդ, թուրքերն արգելում էին ռազմական գույք անցկացնելը:

Դեկտեմբերին սկսված հայ-վրացական պատերազմի հետևանքով հաղորդակցությունն արգելակվեց մինչև 1919 թ. մարտ ամիսը: Ընդ որում, այդ հակամարտության ընթացքում ռազմական գույքի մեծ մասը Թիֆլիսում բռնագրավվեց վրացիների կողմից: Ահա այսպիսի պայմաններում էր կազմավորվում հայկական բանակը: Միաժամանակ աշխատանք էր տարվում զորքի համար անհրաժեշտ գույքի արտադրության համար: Սկսած 1919 թ. գարնանից, երկրի տնտեսական կյանքի աշխուժացմանը զուգընթաց, զինարտադրությունը սկսեց իրականացվել ավելի մեծ չափերով: Սպառազինության պակասը լրացվում էր համբարակային վարչությանը պատկանող արհեստանոցների արտադրանքի հաշվին: Երևանի և Կարսի ինժեներական արհեստանոցները հիմնականում թողարկում էին ռումբեր և այլ պայթուցիկ նյութեր, փամփուշտներ, իսկ Ալեքսանդրապոլի և Կարսի կարի արհեստանոցները՝ ռազմական հանդերձանք, անդրավարտիքներ, շապիկներ, գլխարկներ և այլն:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, բնականաբար, սպառազինությունն ունեցել է առանցքային նշանակություն: Ինչպես նշեցինք, Անգլիայից բերված հրացաններն

ունեին որոշակի խնդիրներ, սակայն դրանք չէին կարող որոշիչ լինել, եթե պատերազմը վարվեր ինչպես հարկն էր: Բացի այդ՝ հայկական բանակում անգլիական հրացանները դեռևս հիմնական չէին, իսկ եթե զինվորները դրանցից օգտվելու կարգը դեռ չգիտեին, դա արդեն հրամանատարների մեղքն էր:

Ամփոփելով՝ փաստենք, որ 1918–1920 թթ. հայկական բանակը զինված էր իր ժամանակի համար բավականին արդիական զենքերով, բայց, այնուամենայնիվ, կային որոշ խնդիրներ: Մասնավորապես՝ սակավ էր գնդացիրների և հրետանային միջոցների քանակը: Հատկապես անմխիթար էր թեկուզ եղած զենքերի համար զինամթերքի մատակարարման գործը: Սպառազինության համար որպես թերություն կարելի է համարել նաև որոշակի բազմազանությունը: Դժվարություններ կային զենքերի զինամթերքի մատակարարման, սպասարկման և դրանց օգտագործման հմտությունների յուրացման հարցում: Այդուհանդերձ, Հայաստանի առաջին հանրապետության բանակի սպառազինությունը բավարար էր ռազմական գործողություններ իրականացնելու համար:

АРЦРУН ОГАНИСЯН

ВООРУЖЕНИЕ ВООРУЖЕННЫХ СИЛ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Одной из самых мощнейших опор формирования Армянской независимой государственности является создание национальной армии. Армия Первой Республики Армения была создана в тяжелых условиях, в боях.

С самого начала армянская армия была вооружена основным вооружением российской армии. В дальнейшем применялись французские, немецкие и другие винтовки, а с осени 1920 года – также канадские винтовки Ross Mark II или Ross Mark III, присланные из Англии, пулеметы Vickers и т.д. Просуществовавшая всего два с половиной года республика, постоянно ведущая боевые действия, естественно, чувствовала нехватку вооружения и боеприпасов, что отражалось на боеспособности ее армии. Однако надо отметить, что в основном, воружение армии было достаточным.

ARTSRUN HOVHANNISYAN

THE WEAPONRY OF THE ARMED FORCES OF THE FIRST REPUBLIC OF ARMENIAN

SUMMARY

One of the most important bases for the establishment of the independent Armenian statehood was the creation of a national army. The army of the First Armenian Republic was molded under harsh conditions: at battles.

At the beginning, the Armenian army was armed with usual armaments of the Russian army. Then they began to use French, German and other rifles. Starting from the fall of 1920, they started to use "Ross Mark II" or "Ross Mark III" Canadian rifles and "Vickers" machine guns that had been sent from England. Two and a half years old state, being constantly involved in military operations had lack of arms and ammunition.